

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԱՅ

Տարեկան դինը 10 բուր, կէս տարվանը 6 բուր:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мая»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՌՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ գանձակից:
Նամակ Վահագնից: Նամակ Ախալքալաքից:
Ներքին լուրեր: — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ:
Ստորագրողները: — ՀԵՌԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ:
Ստորագրողները: — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Կաղզուման:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Սեպտեմբերի 30-ին

(Մշակ) Հրապարակ №66 մէջ գանձակի նամակ-
ագրողը, ի շարք ալլոց, ակնարկում է սորանից
մի քանի տարի առաջ գանձակում հացի թան-
քութեան պատճառով կայացած հացի առևտուրի
հոլի մասին, եթէ չեմ սխալվում, յիշեցնելով
թէ իմ խոստումն, մեղադրում է, որ ես գլխիկ
եմ հաշիւ ներկայացնել:

Ընթերցողներին պէտք է հասկանալի լինի իմ
նկղ գրութիւնը հաշիւը հրատարակելու մի կողմից
անդամներին ունեց անփորձութիւնից ծագած ան-
հոգութիւնները, միւս կողմից նրա խառնելու
գրութիւնը, բայց ըստի որ մի կողմից պահանջ
կայ, միւս կողմից խոստում, ակնարկից հրատա-
րակում եմ ի գիտութիւն ընթերցողներին:
Հացի թանքութիւնը վերջանալով, հասարա-
կութիւնից ընտրվելին հաշուառները, որոնք ցո-
րին կոմիտեի (մասնագործի) թէ գրամական
և ցորենի մատահանները և թէ գործերը քննելու
կազմեցին արձանագրութիւն (պրոտոկոլ) և 1881
ամի յունվարի 29-ի յայտարարութեամբ ներկա-
յացրին քաղաքային պոլիցիայի տնօրէնութեանը:
Այս թէ ինչ է երևում հաշուառներին արձա-
նագրութիւնից: «Յօդուած 1. Գանձակայանի գրա-
մական մատենից երևում է, որ քաղաքային գումարից
ստացված է 10,000 բուր, հասարակութեան ու-
նոր դասից փոխարինարար 10,320 բուր, և
միանուագ օժանդակութիւն 502 բուր, ընդամենն

20,822 բուր: Այս գումարից վերադարձրած է
քաղաքին 1000 բուր, փոխարինարար փող տուող
հասարակութեանը 7936 բուր, կայ առանձին
գրամ 8647 բուր, 75 կոպ: Յօդուածի մատենում № 81
յօդ. գրած է թէ կոմիտեի ամբարի վերակա-
ցուները՝ Գրիգոր Մկրտումով և Հաջի Մամադ Հա-
ջի Ալի-օղլին տուել են քաղաքի դեպուտատ-
ներին 62 պուղ ցորեն, որ էլ վաւերացրած տուող-
ների ստորագրութեամբ:

Գրամական և ցորենի մատենները, օտար քա-
ղաքում հաց գնողներին և հացի ամբարի վերակա-
ցուներին հաշիւները *) քննելուց յետոյ կայաց-
րին յետագայ վճիռը:

Յօդ. 3. կոմիտեի գանձակահանների գրամական
և ցորենի մատենների մուտքը և ծախքը ընդու-
նել ուղղ (բացի ցորենի մատենում ծախքը դըր-
ված 81-ը յօդուածը):

«Յօդ. 4. (Թիֆլիսում հաց գնող) Սերգէյ Գանիէլի
Ալիանտսիցից և իր ընկեր Հաջի Բադր Հաջի
Մուսայ Գուսէին Ալի Օղլիից պահանջել 270
բուրը:

Յօդ. 5-ը. Մահմետի Գովհաննէս Վարդապետ-
ովից և Հաջի Մուսայ Հաջի Գուսէին օղլիից պա-
հանջել հացի ամբարից պակասացրած հացի դինը
54 բուր, 30 կոպէկ:

Յօդ. 6-ը. Մահմետի Քերովը Տէր-Մարտիրոս-
ովից և իր ընկեր Ալի Հաջի Մահմետ Օղլիից պա-
հանջել պակասացրած հացի դինը 320 բուր, 52
կոպէկ:

Յօդ. 7-ը. Գրիգոր Մահմետի Մկրտումովից և իր
ընկեր Հաջի Մամադ-Հաջի-Ալի օղլիից պահանջել
համաձայն իրանց ներկայացրած հաշուառներին
2250 բուր, 35 կոպ, բացի սորանից որ քաղաքա-

*) Թէ և հարկ էր օտար քաղաքում հաց գնող-
ների և ամբարի վերակացուների մանրամասն հա-
շիւները դուրս բերել, բայց սաստիկ երկար լինե-
լու պատճառաւ թողնել և բաւականացայ միայն
վճարում: Գուտով եմ յարգելի ընթերցողները
ներողամբող կը լինեն:

Յ. Լ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

(ՄԻ ՀԱՏՈՒՄԸ ՀԱՆՈՒՍԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍԿԱՆ
ԲԱՆԻՑ)

ԿԱՂԶՈՒՄՆ.

III.

Եկեղեցի, դպրոց, վերանորոգելու խնդիր.
դասաւարտութիւն. կառուածքներ. եկամուտ: Քահա-
նայք. դպրոցներ. հասարակական դրք. նիւթա-
կան միջոց. Վարդի առաջնորդի ուշադրութեանը:

Կաղզումանի եկեղեցին արտաքին կողմից տեղե-
անշուք մի շինութիւն է նեղ ու փոքր բուսամուտ-
նով. ներքից՝ փոքր ինչ աւելի զարդարված.
բնով, հին, եղծուած ու տեղ տեղ պատաստուած
պատկերներով: Գրքի տեղեկութիւնն մնկնում են
նրանով, որ տաճիկները թող տալիս չեն եղել
քրիստոնեաներին լաւ եկեղեցի ունենալ. մինչև
անգամ բուսամուտների փոքրութիւնն էլ պարտա-
ւորեցուցիչ է եղել, որպէս զի ժամասացութեան
ձայնը եկեղեցուց դուրս չը գնայ ու խոստարիւն
մասնագէտներին սրբատուր ականջին հասնելով,
նախորդութեան պատճառ դառնայ այս կեանքում
մեծ պատասխանատուութեան տակ ձգի հանդերձեա-
լում...

Եկեղեցու շէնքը շատ հին է, մինչև անգամ
նախնուր, ներքի կողմից հաստ սրենքով ամրա-
ցած. մեծ ու անհրաժեշտ կարիք է զգացվում

և շանգուցեալ Գրիգոր մահտ. Մկրտումովից, ո-
րոնք մնացել են պարտ համաձայն վերոյիշեալ
վճարատուութեան հաշուառներին, կամ զիմե
քաղաքային պոլիցիային խնդրելով նրա կարգա-
դրութիւնը այդ հարցի վերաբերմամբ:

Յակոբ Լիսիկեանց

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Սեպտեմբերի 28-ին

Շիրակի դաշտում այս տարի հունձը բաւականին
առատ էր, մանաւանդ առատ էր ցանոցները՝ հա-
մար: Գահարեցիք կարելի էր այս տարի անհոգ
և կուշտ փորով հաց ուտել, եթէ չը լինէին անի-
ծած պարտքի խոշոր կոյտերը, որոնք այսպիսի
փոքր ինչ առատ տարիներում դիւրապէս խլում
են նրանց տարեկան վատաւելը և ամբարում հաջի
արաների շտեմարաններում Այդ մի և նոյն հացն է,
որ մի կամ երկու տարուց յետոյ կրկնակի գը-
նով նորից ծախվում է մի և նոյն գիւղացու վրա և
աւելի ծանրաբեռնում է նրան:

Գահարեցիք սրանից 35 տարի առաջ 30 տուն
էին և մշակելով այժման հողը, փոքր չափով բարե-
կեցիկ կանք էին վարում. իսկ այժմ դառնալով 65
տուն, ապրում են մի և նոյն հողով. ապրում են այս...
եթէ ցանկանայինք փոքր ինչ դիպել մեր դահար-
եցու հպարտ ինքնատիրութեանը, որ նա իր չքա-
ւոր դրութեամբ ձգտում է միշտ հարուստ երևալ
ուրիշի աչքին, կը խոստովանէինք, որ նրանց մե-
ծամասնութեան սեղանի վրա բազմող սովորա-
կան կերակուրը աւելուկէ ապուր է, աղցան, գոլի,
սուխ, և այլն:

Բաղդը կարծես նախանձ է որանց անխախտ-
նելու փառքի վրա, և աշխատում է ինչ որ ու-
նեն չունեն, միանգամայն ձեռքերից լսել: Սրանք
Վարդի նահանգում ունեն մի կայր, ուր մի քա-
նի տարի պահպանելով իրանց տաւարը, մասնա-
ւոր իւր ու պանիր էին պատրաստում, այն էլ
այժմ ձեռքերից առաւ և խաւաւ չորացրեց նրանց

մի նոր բան էր. այս պատճառով էլ դատաստա-
նատունը լցվել էին թէ ընկիւններ, թէ նորեկներ և
թէ ուսու հասարակութիւնը—դիւրապէս ու այլ
պաշտօնական աստիճանաւորներն իրենց ընտանի-
քով: Կատաստանատեղին զինուորականների ամբար-
անի կուշտ էր: Գործը թէ մեծ էր և թէ ամենքի
համար հեռաքրքրական: Հայ քահանայի ընթերցա-
նութեան վարժութեան մասին ճիշտ զգալիար
կազմելու համար արժէր այնտեղ դառնել և տես-
նել թէ ինչ զգոյով էր գրում երգման թուղթը
վկաներին երգում տալիս: Պ. փաստաբանը—Քա-
լանթարեան—ստիպւած էր առ ժամանակ իր ուղ-
ղակի կլիէնտին թողնելու և պաշտպանութեան
չափ արժանի նոր պատահական կլիէնտին—հայ
քահանային ընթերցման սաստկաստեղծ արկած-
ները պաշտպանելու... Այսպէս ինչքան էլ որ
աշխատեց պ. փաստաբանը, չը յաջողեց նրան
այդ դժուարին պաշտպանութիւնը. անաչն աբ-
տէլը շատ էր բոլրիկ է. ասեմք թէ սանաղ (մուր-
հակ) լինելը չորոշեց, գոնէ իբրեւ բարեալի կար-
գար, էլի մի բան էր:

Մնում է մեզ մեր երեսը դարձնել Վարդի սրբա-
գան առաջնորդ հայր Աղուանանցին և նորին սըր-
բաւորութեան հետ խորհրդակցող ազնիւ պարոն-
ներին: Սրբազան առաջնորդը միջոցներ շատ ու-
նի գործադրելու. նա կարող է քարոզչներ, գոր-
ծակալներ նշանակել խոհմ ու բանիմաց քահա-
նաներից մինչև անգամ որոշ ուժեղով. թող այդ
ուժեղները հայրապետ համար դիմեն մեր բա-
րեգործական ընկերութիւններին: Չենք կարծում
որ այդ ընկերութիւններին ընդհանուր ժողովներում
չը գտնվեն մարդիկ այդ իրաւացի ձայնը լսելու
և դրան բաւականութիւն տալու համար: Օգնու-
թիւն առաւել հարկաւոր է այնտեղ, ուր ժողո-
վուրը այնքան ընկած է, որ չը նայելով դէպի
անկումն է գնում, այնու ամենայնիւ ոչ կարողու-

ուրիշ բան չէ, բայց միայն ժամում քիթ տակ զըր-
բեր կարգով, այդինքն աւելի ճիշտն առնելով, դա-
տարկ ձայնի հանել երբեմն բարձր, երբեմն ցած
և երբեմն ծորելով, հոգոյ ու պահպանիլ աւել,
մեռել թաղել, կնքել, պսակել... Գալով քահանա-
յութեան կրթողական, դատարարակիչ, բուն հով-
առ կողմերին, պէտք է ասենք, որ այդ մասին
զաղափար անգամ չունեն Կաղզումանի քահանա-
ները: Իրենց ծիւղ մէջ չեն վայելում և այն յար-
ու պատիւը, ինչ որ մեր կողմերում: Այս առաջ
է եկել նախ բուն իրենցից—քահանաներից, որոնք
իրենց սղիտութեամբ շատ անվայել արարման-
քներով—(միմեանցից զաղել, միմեանց հախոյել,
ժողովրդին վիրաւորել զանազան չնչին բաների հա-
մար և այլն և այլն)—զայցաբերել, զղուարդել են ի-
րենց հօտը, և ապա նորեկների վարժանքներից, ո-
րով Աստուած իրենց բարի տալ, քահանաներին
հէնց հողի հետ հաւատարեցրին: Այս ամենի վրա
պէտք է ակնայնել, որ նրանց եկամուտներն էլ
չափ չնչին են, համարաւ թէ նիւթական ոչինչ
վարձատրութիւն չը կայ:

Արեւոք չէ կարելի հասակաւորներին մի քանի
ուսումնարաններ հիմնել գիւղերում գուտ քահա-
նաների համար, ուր հերթով դալին գոնէ գրել
կարգաւ ուսանելու: Երբեմն մարդ ամաչում է դը-
րանց փոխարէն, և ինչ հայր հայ ու մայր չէր լի-
նում, երևին իր ձեռքերի մէջ չէր ծածկում ան-
ցեալ օգոստոսի 8-ին նահանգական դատարանի
նստի ժամանակ, երբ հայ քահանան չէր կարողա-
նում երգման թուղթը կարգաւ: Այդ օրը երևանի
նահանգական դատարանի մի մասը եկել էր Կաղ-
զուման իր Դաւիթաբաշտում ձեռքով սպանած
մի կնոջ գործը քննելու (Վարդի նահանգում
չը կայ նահանգական դատարան, երևանին է
այդտեղի գործերը վճարում): Կաղզումանցիների հա-
մար այդ դատարանը իր կազմութեամբ բոլորովին

Յ. Լ.

չանաղը, իսկ հիմա հեռու կանգնած դեռ ես
սպասում է, որ մի քանի էլ փախցնի, բայց ոչինչ
չէ գտնում:

Վերջապէս, չը նայելով դահարեցող կենցաղա-
վարութեան այս և այն ծանր հանգամանքներին
պէտք է խորտոմանքով, որ նրանցում արդէն կայ
երկու միտիւթարական երևոյթ, որոնց նմանը հա-
զիւ կարելի է գտնել ամենահարուստ և բազմա-
մարդ զիւղերուն անգամ: Առաջինն է նրանց եկե-
ղեցին, որ շինած է սրբատաշ քարերից, յատկա-
րաւորապէս, պատերը կրով մաքուր սպիտա-
կացրած, խաչկար բաւականին ճաշակով շինած,
զարդ ու անօթիկները վայելուչ, ժամերգութիւնը
փառաւոր: Իսկ երկրորդն է նրանց դպրոցը, որ
բաւականին բարեկարգ դրութեան մէջ է. նրա-
նում դաս են աւանդում երկու ուսուցիչներ, որոնք
տարեկան ստանում են 270 ռ. ուսճիւր:

Գլորիոյը բացի նախկին ունեցած երկու կտոր
մասնաւոր հողատեղերից, ներկայ տարւոյս ջանա-
սէր հողաբարձութեան շնորհիւ մի կտոր հող էլ
աւելացրեց, որ գտնուում է Ախուրեան գետի վրա
երկու օրավարից աւելի տարածութեամբ, թուրքի
Ղարաբլինայի հանդէպ: Հէնց այդ մասաւորու-
թեան պատճառաւ թուրքերը մի քանի տարի ա-
ռաջ բռնութեամբ տիրապետել էին նրան, իսկ Գա-
հարուն հասարակութիւնը չը կարողանալով թուր-
քերին ընդդիմանալ, երկուդ կրկնով նրանց սպառ-
նալիքները, ճարտաւատեալ այդ տեղը յանձնեց
հրապարակել: Ուստի տեղւոյս հողաբարձու-
թիւնը յօլով ամսի մէջ Ալեքսանդրապոլի դաւա-
նագետ պ. Գահարունեանցի պաշտօնական ծա-
նուցագրով ներկայանալով Արդիւն դաւաւական
վարչութեանը, որի տեսչութեան տակ գտնուում
է թուրքի Ղարաբլինայ, թափեց նրանց ձեռքից
այդ հողը, քայքայ բաւականին դժուարութեամբ
որոշեցանք չը նայելով որ յիշեալ վարչութիւնը
հինգ անգամ թուրքերին կրկնեց իր թէ բերանա-
ցի է թէ դրաւոր հրամանները, որ նոքա հրաժար-
վին այդ խոտաւտեղից, բայց թուրքերը չէին լը-
սում, այլ ամեն անգամ, երբ դպրոցի բանօրինը
սկսում էին հնձել խոտը, նոքա անգիւնալով Ա-
խուրեան գետը, յարձակվում էին բանօրինի
վրա և ձեռնելով դուրս էին անում նրանց:

Վերջը թուրքերը գաւազակելով իրանց յանդիմու-
թեան վատ հետեանը, հրաժարվեցին, բայց այս
անգամ նրանց փոխարինեցին կանաչը: Հիմա-
լի էր տեսարանը, երբ գիւղի բոլոր իգական սեռը
օրորդներ, հարսներ և միջնասակ կանայք, որ
մի կտորած թիակ ձեռքին, որը մի բաձ, որը մա-
հակ, որը մի եղանակի կտոր ուսնի դրած անցկացան
Ախուրեան գետը և սկսեցին հարուածել բանօր-
նիքին: Խաչկարն իսկ չէր Վաղարի մերկ գլխին դա-

թիւն ունի հասկանալով թէ ուր է գնում և ոչ
ուժ ունի օգնութիւն օգնութիւն կանչելու...

IV

Երանան դպրոց. վիճակը. հոգատարութիւն
ընկերներ և նորեկներ կողմից: Պաշտօն և իր
գործունէութիւն: Կովկասու հայոց Բարեգործական
ընկերութեան ուղարկութեանը:

Կաղզուանի հայոց եկեղեցու բակում կայ մի
շինութիւն, որին անուանում են դպրոց, որ
նախ քան քաղաքային դպրոցի բացումը, ուսա-
նելիս են եղել հարկւորից աւելի աշակերտներ,
իսկ այնուհետեւ նորեկները բարի օրինակին հե-
տեկնով տարել են քաղաքային դպրոցը, որ ձրի
են ուսանում: Այժմ ծխական դպրոցը գրեթէ ա-
նուշադիր մնացած է: Գաղթեց անանձին եկա-
մուտներ չունի. միակ եկամուտը աշակերտներից
ստացված թոշակաւորանքներն էին և եկեղեցու
տուած մասնաւոր օգնութիւնը: Երկրորդում ծո-
ղուրդը չը կարողանալով և չը կամենալով տա-
րեկան 8—10 ռ. թոշակաւորումը վճարել, իրենց
որդիներին է որ հանցեցին, է որ տեղափոխեցին:
Ինչիկները մի քանի անգամ կամեցել են ընդ-
հանուր խորհուրդ կազմել նորեկներին հետ դպրոցի
մասին հոգատարութիւններ անելու համար, բայց
և միշտ բացասական պատասխան ստանալով, մը-
նացել են սուտ նստած. այդ բաւական չէ. նո-
րեկները բարի դասկները դեռ եւս որոգայթներ
էլ են լարել այն մի քանիսին դէմ, որոնք մտածել
են կամեցել դպրոցի բարեկարգելու մասին... Հիմա
թէ զանազան դարձանքերից երկուդ կրկնուց վա-
խանալով, թէ ժողովրդի աղքատ դրութիւնը տես-
նելով, այն մի քանիսն էլ յետ են քաշվել, թող-
նելով ծխական դպրոցը երեսի վրա ընկած: Սպա-

գանալ էր, որ թրքերում էր. խեղճը կուշ եկած
հաղիւ թէ մի քանի դուրսահաս թուրքում պա-
տասխանում էր նրանց, իսկ միւսները կանայք
յատուկ կատաղութեամբ և անկեհերտաւորութեամբ
գլորովում էին հնձող գերանդներին առաջ և չէ-
ին թող տալիս հնձելու, մինչև որ վերջապէս ծե-
ծելով դուրս արեցին հնձողներին խոտաւտեղից:
Վերջ ի վերջ այս բոլոր անկարգութեանը վերա-
ճան տուեց մի օրինաւոր պատիժ, մի երկու տա-
նակ մտաւրի հարուած, որ ընդունեց Արդիւն
գաւառապետի ձեռքից թուրքի աղաւթի ալիւն:
Այնուհետեւ խոտը ծախվեց յօդու ուսումնարա-
նին, 37 բուլբուլ:

Այս ամենից յետոյ յայտնում ենք մի ի սրտե
շնորհակալութիւնը Ալեքսանդրապոլի գաւառա-
պետ պ. Գահարունեանցին, որ իր պաշտօնա-
վարութեան բոլոր տարիների ընթացքում միշտ
համակրել և պաշտպան է հանդիսացել Գահար-
ունի դպրոցին: Նա ոչնչացրեց դպրոցի ներքին
հակառակորդների անմիտ ցնորդները, որ միշտ
փորձում էին դպրոցի այդ մասնաւոր հողերը յետ
խլել, հակառակ իրանց սուտ համախոսական
թերթին. նա էր, որ մինչև անգամ յորդորում էր
ուսուցիչներին բարեխղճաբար կատարելու իրանց
պարտականութիւնները. վերջապէս նա էր, որ
պատուիրում էր գիւղի տանտէրին աշակցել հո-
ղաբարձութեանը դպրոցի յառաջադիմութեան հա-
մար: Բայց ախուս, որ պ. Գահարունեանցը վաղը
հրապարակել է Ալեքսանդրապոլից, իսկ նրան յա-
ջորդում է մի օրինակ: Ուր ուրեք որ լինի, այնու
ամենայնիւ երախտապէս սրտերը չեն մոռանալ
իրանց բարեբարեկներին:

Կիւղացի

ՆԱՍԻՄԿ ԱՍԽԱՐԱՍԱՒԵՑ

Հոկտեմբերի 9-ին

Լուսաւորեալ հասարակութիւնների մէջ իւրա-
քանչիւր անգամ հասկանում է, որ ինքը պարտա-
ւոր է խիստ բարոյականութիւն պահպանել ոչ
թէ միայն նրա համար, որ բնական և դրական
օրէնքները այդպէս են հրամայում, այլ որովհետեւ
նա այնպէս է գաւառապետական, կրթութեամբ որ
աղիւն լինելը, առաքելութիւնը նրա հոգու պա-
հանքն է: Որ և է պաշտպանելի վարմունք նա չէ
գործում ոչ թէ նրա համար միայն, որ դա մեղք
է, այլ որ ամօթ է:

Իսկ այնպիսի հասարակութիւնների մէջ որտեղ
լուսաւորութիւնը դեռ կատարելապէս չէ մուտք
գործել, բարոյականութեան պահպանող առաւ-
կան է կրօնը գլխաւորապէս:

սում էին առաջնորդի կարգադրութեանը: Թե-
մական տեսող Պաշտօնային էլ մեծ մեծ խօսելու
մէջ անման, փողերը—ուճիկներն առնելու մէջ
անյաղթելի քաջ. ճշմարիտ խօսող ուսուցիչներին
հալածելու ու խեղդելու միշտ պատրաստ կան-
գնած իր թնամական վերապաշտութեան իրաւունք-
ները երկարել պողովատի սուր շինած ձեռքով:
ուրիշի քրտնեղներով, ուրիշի տառաւոր տարի-
ների անխնայ վատախնդրով փոր ի շտե բա-
րեկարգած դպրոցների գործերի մէջ անպատճառ
ներս խառնելով և անպատճառ իր փառախո-
թեանը բաւականութիւն տալու համար մինչև ան-
գամ խառնափնթոցող, իսկ երբ գործը կը գայ գա-
ւառներ դուրս գնալու, գործեր կատարելու, մի
խօսքով բարեկարգելու, միշտ ծոյլ, միշտ տկար,
միշտ յետամնաց և դեռ իրենց իրաւունք են հա-
մարում ուրիշի քայլերը քննադատելու, դեռ,
Աստուած իմ, մագիստրոսի աստիճան են
ստանում... Այս ամենից յետոյ ունից սպա-
սեմը օգնութիւն... Խեղճ հայ ժողովուրդ, կար ժա-
մանակ որ բարբարոս թուրքն էր քեզ հարստահա-
րում, քեզ հալածում, այժմ քեզ քո արեւմտիկե-
րները, քո աղքատներն են հարստահարում, քո
արեւելը ծծում... Ինչ անբարոյ աստղի տակ ենք
ծնել... Ինչ անբարոյ ակնացած ժամանակի մէջ
ենք ապրում...

Ամեն տեղից յայտնես կտրած դիմում ենք Կով-
կասի հայոց Բարեգործական ընկերութեանը: Թող
մեր խեղճը, մեր ձայնը անխնայ չը մնայ: Կով-
կասի հայոց Բարեգործական ընկերութիւնը Ռու-
սաստանի ընդհանուր հայրի համար է և ոչ եր-
բէք միայն թիֆլիսի: Ընկերութեան պարտքն է
չը յիշանել մասնաւոր մարդկանց, ծանօթների ու
բարեկամների խնդրին, աղաչանքին այս ինչ ըն-
տանիքին, այն ինչ ուսանողին և այլն և այլն
նրա թախան օգնութիւն տալու համար. դրանք

Անցեալ օր մի բնաւորիչ դէպք պատահեցաւ
ինձ հետ, որ կարծեմ բաւականաչափ ապացուցա-
նում է իմ ասածը: Ես և մի քանիսն այդպիսի
էնք դաշտում, երբ մեզ մօտեցաւ մի ծերունի
քարահատ: Նրա կոշտացած ձեռքերը, զօրեղ մկա-
նունքը ցոյց էին տալիս, որ նա մշակ մարդ էր:
Նրա ալիւթաւ մաղերը, բարի դէմքը՝ դրսուում
էին տեսնողի ուշադրութիւնը: Նա մեզ բարեկ
և փոքր միջոց գնում էր մեզ հետ: Նրա դէմքը
մտախօսութիւն էր յայտնում: Վերջապէս նա
բարձրացրեց զուլը և մի տեսակ շփոթվելով
դիմեց քահանային և ասեց. —Տէր հայր, ես ամ-
բողջ կենցաղում երբէք ծուլացած չեմ, չը նայելով
իմ 64 ամեայ հասակին երբեք խուսափած չեմ
աշխատանքից, բայց և այնպէս իմ աշխատանքը
հաղի. հազ բաւականանում է իմ ընտանիքը կա-
ռավարելուն, այն ինչ շատ ուրիշներ մի սուտ
խօսելով, մի անաղուտութիւնով, հաղարկել են
ձեռք բերում և առանց աշխատելու մեղանից
հաղարկապատիկ լաւ ապրում Գահանան սկսեց
միտնալ նրան կրօնի միջոցով, յիշեցրեց առա-
քելութեան վարձատրութիւնը և անաղաքիներին
պատիժը հանդերձաւ կեանքի մէջ: Երբունքն բա-
ւականին հանգստացաւ, բայց դարձաւ շարունա-
կեց: Նա ասեց, որ ուրիշի հաշուով ապրողները
չեն պատժվի, որովհետեւ առաւ որդրութիւն-
ներ են տալիս աղքատներին... Քահանան միտ-
նալով նրան՝ ասեց, որ Աստուած արդար վաս-
տակից սուտ մի կողմից որդրութիւնը աւելի
բարձր է դառնում, քան անաղաքի ճանապարհով
աշխատած ուրիշները: Ես իմ կողմից աւելացրի
որ նրա համար մեծ երջանկութիւն է անարատ
անցեալը, խղճի հանգստութիւնը, բարի անունը
որ աւելի թանկ արժէք, քան աշխատի բոլոր հա-
րստութիւնները միասին վեր առած: Այդպէս խօ-
սելով հասանք քաղաք: Երբունքն շնորհակալու-
թիւն արեց, և բաւականին թեթեւացած իրան
ճնշող մտածումներից, հեռացաւ մեզանից:

Դատերը դուցէ ասեն (մեր թշնամիներից ի
հարկէ) որ այսպիսի բաներ յաճախ են պատա-
հում և թէ չարքէ դոյա մասին դրել: Իմ կար-
ծիքով դա սխալ է: Իմ պատմածս մի երևոյթ է
կենսաբան մէջ, իսկ իւրաքանչիւր երևոյթն ունի իր
ներքին պատճառը, և եթէ մենք չենք կարող
թափանցել դրան՝ գոնէ պարտաւոր ենք միջոց
տալ մեղանից աւելի հասկացողներին՝ որ նոքա
ուսումնասիրեն այդպիսի երևոյթների պատճառ-
ները: Իմ կարծիքով ծերունին յուսահատված էր
այն պատճառով, որ անաղաքի միջոցներով հա-
րստանալը մեղանում պատարակելի չէ համար-
վում գրեթէ, և որ հարստացողներն էլ որդրու-
թիւնով յայտ ունեն խուսափել Աստուծոյ դատա-

մանը գործեր են, այնպիսի գործեր, որ իրենք
միջոցորդները կարող են բաւականութիւն տալ:
Ընկերութիւնն առաւել մեծ գործերի վրա պիտի
մտածի: Նա թող մի քանի ժամանակ մոռանայ
թիֆլիսը, թող իր հովանաւորութիւնը տարածի
աւելի հեռուն, այնտեղ ուր որ բաղմունք կայ
օգնութեան կարօտ, ուր որ ամբողջ ժողովուրդ
կայ դէպի անկումը գնացող, թող աճապարի այդ-
պիսի տեղերում դպրոցներ բանայ, ներքա մի-
ջոցների չափ օգնութիւն տալ, այդպիսով թէ ա-
ռաւել մեծ գործ կատարած կը լինի, թէ համայն
հայրի սիրտը իր հետ միացրած և թէ իր նպա-
տակին ծառայած... Մի քանի համալսարանական
ներ աւելի կամ պակաս ունենալ շատ մեծ բան
է, մասնաւոր որ մեր համալսարանականների ա-
բարմունքներն աչքի առաջ են, այն ինչ ամեն
մի ուսանողին ուղարկած փողերով մի ամբողջ
դպրոց կարելի է պահել հարկաւոր աշակերտ-
ներով: Վստահանում ենք, յուսաւ որ մեր խօսքը
չի մնայ չձայն բարբառոյ յանապատի:

V

Քաղաքային դպրոց. ուսուցիչ. ձգտումներ. հո-
գատարութիւն նաեւ տեղական իշխանութեան
կողմից:

Միակ դովանքը Կաղզուանու քաղաքային եր-
կու դատարանով ուսումնարանն է, թէ իր գեղե-
ցիկ ու մաքուր (համեմատաբար) շինութեան կող-
մից, որ մօտ 15,000 ռ. է նստել, թէ իր ներսի
կարգաւորութեամբն ու խնամատարութեամբը:
Աշակերտներ ընդունվում են ամեն աղղութիւնից
առանց խտրութեան, ուսանում են ձրի, միայն
վերջերում տարեկան 3 ռ. թոշակ է նշանակւած,
այն էլ գրեթէ կամուրջ: Ուսուցիչը և վերակա-
ցուն է պ. Եօվրուզովը, ուղղափառացած մասն-

տանից... Եւ արդարեւ այսպիսի մի կատակածը ծե-
րունու մտքի մէջ բնական էր, քանի որ—ինչպէս
ասեցին—հասարակութեան մեծամասնութիւնը պա-
խարակելի չէ համարում անաղաքի ճանապարհ-
ները՝ եթէ նոքա տանում են դէպի սակեղէն հո-
թը: Բաւական է միայն հարուստ լինել, որքան
և կատակածն է լինել դրա աղբիւրը, որպէս զի հա-
սարակութիւնը յարգէր մէկին: Կրա հակառակ
որքան և առաքելի, աղիւն լինի մի մարդ, բայց
եթէ տանջվում է դրական թողալտոյ, ոչինչ
համակրութեան, յարգանքի յոյս չէ կարող ունե-
նալ: Այդ հանգամանքը ի հարկէ չէ կարող չը յա-
ռաջացնել այնպիսի մտքի՝ ինչպէս ծերունուն
էր: Մի և նոյն ժամանակ դա ապացուցանում է, որ
կենդանի խօսքը—քարոզի բացակայութիւնը շատ
զգալի է ժողովրդի համար:

«Մշակի» մէջ իր ժամանակին գրած եմ, որ
ծաղիկ հիւանդութիւնը բաւականին դոհն է տա-
նում մանուկներից: Տարածված է և րկացաւը,
որ ասում են թէ վարակիչ տեսակներից է: Այս-
տեղից գրուած մի բանի հեռադիւրներ և նամակներ
«Кавказ»-ի մէջ, դարձրին կովկասեան բժշկ.
վարչ. ուղարկութիւնը, ուստի այստեղ և դաւանը
չը ջնջու և հիւանդութիւնը հեռադուրեւ համար
ուղարկվեցան մի բժիշկ և երկու պատուաւորա-
ներ (вакциниаторы): Բժիշկի կարգադրութեամբ՝
մանկանց դիակները այրում են չը հանգած կրօն
որ լեցնում են դադաղի մէջ և շարժը, և թրջում
ջրով: Տները մաքրվում են կարբոլեան թթուով:
Կիւնքների այրելը յառաջացնում է այստեղ շատ
վատ աղղեցութիւն: Մերոնք միշտ սարսափում
են դրանից և նմանապէս վախենում են դիակահա-
տութիւններից: Խրաքանչիւր մարդ միջոց չունի
բժիշկ հրաւիրելու իր հիւանդի համար, շատերը մե-
նում են և եթէ վարակիչ հիւանդութիւն չը կայ,
բժիշկը առանց դիակին նայելու թոյլտուութիւն է
տալիս թաղուել: Սորանից մի քանի տարի առաջ
պատահեցաւ մինչև անգամ մի ծիծաղելի դէպք:
Մէկը գնում է իր որդուն թաղելու թոյլտուութիւն
առնելու և որովհետեւ ուսուցիչն չը գիտէ, դժուա-
րութեամբ է խօսում բժիշկի հետ: Բժիշկը
հարցնում է հանդուցեալ անունը, այցելուն իր
անունն է ասում և հրաման է ստանում թա-
ղուելու... Իրան—Այդպիսի անհոգութիւնից կա-
րող է պատահել, որ զանազան եղեւնագործու-
թիւններ ծածկվին, որոնք կարող էին մերկանալ
դիակների բժշկական հետազոտութեան միջո-
ցին: Առաջին հարկաւորութեան միջոցների գնե-
րն են տեղական ալիւր 50 կոպ. թիւած հացի
Փոնտը 2 կոպ. միւսը 5 կոպ. Փոնտը, կովիւղը,
հալած՝ 11 բուլբուլ, ձուի հատը մի կոպ., Փոնտը:

տական հօրից և հայուհի մօրից. գիտէ թէ հայե-
րէն, թէ ռուսերէն և թէ թուրքերէն. իբրեւ ու-
սուցիչ արեւմտեան է և լաւ համարում է վաստա-
կած տեղացիներից. գիտէ վարվել աշակերտների
ու նրանց ծնողաց հետ: Կիւնք դիւստանքներից օդ-
տուել. արծուի սրտախտութեամբ հսկում է զղա-
րոցին: Անցանկեղում առանձնապէս դիմել էր
խնդրաբոլ ուր հարկն է թոյլտուութիւն խն-
դելու, իբրեւ բացառութիւն, նաեւ պատրաստա-
կան դասաւանդ ունենալու, որ սովորաբար չեն
ունենում: Նորմային դպրոցները, և ստացաւ
թոյլտուութիւն: Նրան օգնական է իր ամուսինը,
որ նոյնպէս ուսուցանում է: Նրանց բոլոր ձրե-
տուներն է իսկապէս ծառայել դպրոցի շահերին
և շատ ուղիղ ճանապարհի վրա են կանգնած. ա-
մենին զանազանութիւն չեն գնում աղղութիւն-
ների մէջ, ինչպէս շատ տեղեր անկիրթներին յա-
տուկ է. կիրակի և տօն օրերը աշակերտներին
տանում են եկեղեցի, ամենքն ըստ իրենց դասնու-
թեան. վերջապէս ըստ ամենայնի արժանի են այն
համակրանաց, որ ունեն. թեմական վերապաշտ-
կամ օգնականը իր ժամանակին այցելում են և
ի հարկէ գոհ մնում: Այս է պատճառը, որ ամեն
կողմից լցնում են աշակերտները: Տեղական իշ-
խանութիւնն էլ իր ձեռքից եկածները ամենին
չէ խնայում դպրոցի թէ աճման, դարբացման և
թէ աշակերտների թիւն աւելացնելու համար:

Խաղաղի

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

